

դիտապետութեան Հայոց հանուրց սեռից
Տեառն Ստեփաննոսի հանգուցեալ առ
Քրիստոս. և 'ի վերադարձութեան նահան-
գիս Պարսկաստանի արհի եպիսկոպոս
Տեառն Աղեքսանդրի »: 2. Վասն երակ
առնել (թուղթ մի):

90. Թիւ 117. 4^o.

Շարական: Առանց յիշատակարանի:

91. Թիւ 118. 12^o.

1. Տոնացոյց: 2 Շարականք և աղօթք ա-
ռաւօտու: 3 Մեղայք: Առանց յիշատակա-
րանի:

92. Թիւ 140. 4^o.

1. Գանձարան: 2 Խորատ ոգեւահ նորըն-

ծայ քահանայից: 3 Ժամամուտք: Գրեցաւ
'ի Թուին Հայոց ՌՁԹ. հոկտեմբերի ԺԻ:

93. Թիւ 160.

Miscellanea. — 1. Epistola Armenica.
Նամականի հայկական: Երկու հայերէն
նամակք գրեալ յամին ՂԷ (նոր թուական
Հայոց?) յաշարհականէ ումնմէ առ
վարդապետ ոմն, որպէս Թուի 'ի Հնդկա-
ստանէ յԵւրոպա: 2 Մալարարեան և Սին.
գիպեան ձեռագիր Թուղթ մի հանդերձ
մեկնութեամբ 'ի բարբառ գերմանական:

94.

Շարական: Առանց յիշատակարանի:

Բ Ա Յ Ա Յ Ա Յ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ ՀՆՁՄԱՆ ԵՒ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌ ՄԵՍ. ԽՄԲԱԳԻՐՆ

Մ Շ Ա Կ Լ Ր Ա Գ Ր Ի

Սոյն տողերս գրած թուականէս
(սեպտեմբեր 5) գրեթէ երկու ամիս ա-
ռաջ՝ զանազան կողմերէ յազգայնոց
հրաւէրքը ընդունեցաւ Բաղմավէյ Հան-
դիսարանի խմբագրութիւնն, իւր կար-
ծիքը յայտնելու հայկական տառից նը-
կատմամբ տեղի ունեցած բանակրու-
ւոյն առթիւ ընդ Ռուսահայոց և ընդ
Տաճկահայոց: Մեր ստիպեալ լինելով
սպասելու Բաղմավէյ Հանդիսարանի
լոյս տեսնելու ժամագրութեան, նոյն
ժամանակ չկարողացանք զոհացընել
դուստմնասէր հարցանողս, որոց խրն-
գիրը կատարելուն պատակաւ այժմ հե-
տեւեալ համառօտ տողերը կը գրենք.
յորս առանց երկար բացատրութեանց
մեր կարծիքը պարզօրէն յայտնած կը
համարինք, թողլով յարմարագոյն առ-
թի՝ զայնս լաւագոյն հետազօտու-
թեամբք հրատարակելու: — Բայց ո-
րովհետեւ յարձակողական մասը Մշակի
Մեծ. Խմբագիրն ընտրեց, մեզ կը մնայ
գրել 'ի մեր նպատակաւ պաշտպանողա-

բար, և ծանօթացընել որում ինքզինքն
անծանօթ կը ցուցընէ Պր. Գրիգոր Ար-
ծրունի: — Ահաւասիկ այս մասին իւր
խօսքերն, զորս կը քաղեմք Արևելք
լրագրի 688 թուոյն մէջ վերտապեալ
հատուածէն, զայն առձեռն պատրաստ
ունելով:

« Մեր (Ռուսահայոց) գրական լե-
զզուն մշակվում է ժողովրդի խօսած
« կենդանի լեզուի, կենդանի բարբա-
« ուի ձևերի վրայ. նրանից ենք մենք քա-
« ղում մեր նիւթերը, որպէս կենդանի
« և անսպառելի աղբիւրից, այն ինչ
« կոստանդնուպօլսի լեզուն չինձու, ա-
« ռուեստական է, նոյնքան կղզիացած
« է՝ որքան կղզիացած է ինքն կոստան-
« դնուպօլիս քաղաքը: կոստանդնու-
« պօլսի Հայերը և նրանց ուսուցիչները՝
« (sic) վենեցիայի Մխիթարեանները՝
« այն աստիճան կղզիացած են, որ մինչև
« անգամ մոռացել են թէ ինչպէս են
« արուստանվում Հայոց այբբենարանի
« տառերը: նրանք արդէն մոռացել

« Են՝ որ Հայոց քառաւ Ե Զնչում, որ պ
« առաք ք արտասանվում է, որ գտառը
« ց է Զնչում: Քրիստոնէութեան առա-
« ջին դարերում, երբ աւետարանը
« թարգմանվեցաւ հայերէն լեզուով,
« Պետրոս առաքեալի անունը գրվում
« էր Պ-ով և Ս-ով, ճիշդ եւրոպական,
« յունական տառագրութեան համե-
« մատ, որի այբբենարանի հնչիւններին
« համեմատ մեր Մեարոպ կազմեց և Հա-
« յոց այբբենարանը: Բայց թիւրքաց
« լեզուի ազդեցութեան տակ՝ կոստան,
« դնուպօլսի Հայերը, և իրանց զիտնա-
« կան համարող Մխիթարեանները,
« հետզհետէ կորցրին Հայոց այբբե-
« նարանի հնչիւնների ճշգրտութիւնը, և
« այժմ նոյն յունական Պետրոս բառից
« ծագած, օրինակ Պետերման ազգա-
« նունը, Հայոց լեզուի այդ թիւրքա-
« ցած այլանդակողները տպագրում են
« արդէն Բեդէրման... Հին յունական
« գրականութիւնից մեր առաջին դա-
« րերում թարգմանուած հայերէն գրք-
« քերում մենք հանդիպում ենք եւրո-
« պական բառերի Հայոց ամենածիշտ
« տառագրութեանը. Plato անունը
« գրվում է հայերէն Պլատոն կամ Պլա-
« տոն. իսկ այժմ մենդօլական-թիւրք
« լեզուի հնչիւններին ազդեցութեան
« տակ Մխիթարեանները, որոնց մայ-
« բնի լեզուն օրօրոցից սկսած թիւր-
« քերէն է եղել, սովորեցրին և Հա-
« յաստանեայց կղղիացած Պօսեցիներ.
« Բրն Բլադօնակսն տսել, և այլն, և
« այլն. — Վերջընում էք կոստանդնու-
« պօլսում կամ վենեցիայում հրատա-
« րակված մի գիրք և կամ լրագիր, և
« սկզբից մինչև վերջ մի գլուխ տառա-
« գրական կոպիտ սխալներէ էք հանդի-
« պում, Բեդէրման, Վենետիկ (Vene-
« dig), Բարիզ, Բլադօն, Կամպեդիա,
« Կարիպայտի, Պերլին, Տրիշ, Լա-
« մարիայի, և այլն, և այլն... այդ հար-
« ցի վրայ գեռ առիթ կ'ունենանք խօ-
« սելու և... »

Այս է ահա ասիկ Մեծ. Արծրունդն
խօսից բովանդակութիւնն, զոր ուզե-
ցինք մեր ընթերցողաց ներկայացընել
Պրն Գ.

Իրեն յատուկ բառերով: — Մենք այս
հատուածիս մէջ երկու, մանաւանդ թէ
երեք գլխաւոր կէտեր կը նշմարենք՝
խառնեալ 'ի մի. նախ՝ Ռուսահայոց և
Տաճկահայոց գրական լեզուի դարգաց-
ման բաղդատութեան խնդիր մը, եր-
կորդ՝ հայկական տառից հնչման խնդ-
րի, և երրորդ՝ յատուկ կոչուած ա-
նունաց ուղղագրութեան կամ տուշա-
դարձութեան խնդիր: — Առաջին մա-
սին նկատմամբ առանց խօսքերնիս եր-
կարել ուզելու կը յայտնենք՝ ըստ մեր
կարծեաց՝ որ եթէ Ռուսահայոց լեզուն
կը մշակուի ժողովրդեան խօսած և
կենդանի լեզուին միջոցաւ, ոչինչ ընդ-
հատ նոյնպիսի զարգացումն ունի նաեւ
Տաճկահայաստանի Հայոց գրականական
լեզուն, երբ խորհրդածելու լինի: Եր
Բարձր Հայոց, Աղձնեաց, Տայոց, Վաս-
պուրականի, և այլն, բնակչաց խօսած
լեզուն ևս՝ է կեդրոնական Հայաստանի
յատուկ և սեփական հայերէն լեզու, և
թէ այս ժողովրդեան մէջ 'ի կիր առեալ
կենդանի լեզուն է՝ որ քերականական
լրաւագոյն հանգամանաց ներքե կը ներ-
կայանայ իբր գրականական լեզու 'ի
Տաճկահայս և 'ի տաճկահայաստանի հայ
գաղթականութիւնս, յորս նշանաւոր
տեղի կը գրաւէ նաեւ կոստանդնու-
պօլսի բազմաթիւ հայ հասարակու-
թիւնն: Արդ քանի որ ազգային շահուց
և զգացմանց անխզելի կապն կը զօղէ
ըստ կրօնականին և ըստ քաղաքակա-
նին զՀայաստանցի եղբարս՝ կոստան-
դնուպօլսի հայութեան հետ, մենք չենք
կարող այս վերջինս հայութեան ամ-
բողջութենէն անջատեալ և դրեթէ ան-
պիտան անդամ մի նկատել, ինչպէս
կ'ուզէ ներկայացընել զայն Մշակի
Մեծ. Խմբագիրն:

Աւտի կը թողունք 'ի բաց այս առա-
ջին խնդրը՝ որ չի վերաբերիր ուղղակի
մեր նիւթոյն, և որ ուրիշ արգիւնք չէ
կարող յառաջ բերել, բայց եթէ երկու
կողմանց անձնական զգացումները վի-
րաւորել:

Գալով ուղղակի հայկական տառից
հնչման խնդրոյն, չենք կրնար չնկատել

որ երկու հայ հասարակութեանց մէջ անորոշ ժամանակէ 'ի վեր իրարու հակառակ դրութիւն մը 'ի կիր կ'առնուի 'ի գործնականին, Հայկական գրականական պատմութեան կամ յատկապէս համեմատական լեզուաբանութեան պարտքն է՝ քննել և ծանուցանել թէ ինչ պատճառներէ և կամ որչափ ժամանակէ 'ի վեր սկիզբն առած և տեղի ունեցած է 'ի հայութեան այս հնչմանց զանազանութիւնն։ Մենք չենք կրնար ընդունիլ Մեծ. Արծրունւոյն յառաջ բերած կարծիքն, իբրև թէ մինչև ցհաս. տատութիւն Մխիթարեան Միաբանութեան՝ ամբողջ հայ ազգն Ռուսահայոց հնչման համեմատ միօրինակ հնչումն ունեցած լինի, և թէ Մխիթարեանք եղած լինին զայն աղաւաղողն, ամբողջ տաճկահայ տաակ ազգայնութեան մէջ, ըսկըսեալ 'ի կեդրոնական գաւառացի Հայ. յաստանի մինչև ցհեռաւոր գաղթականութիւնս, փոխել տալով ժողովրդեան ընտանի եղած կենդանի հնչումն, և անոր դէմընդդէմ հակառակ հնչումն ուսուցանել։ Չենք կրնար ընդունիլ այս կարծիքս՝ վասն զի նախ անկարելի է որ Մխիթարեան սակաւաթիւ միաբանութիւնն (վենետկոյ Մխիթարեանց թիւն 'ի սկզբանէ մինչև ցայսօր 300 անձանց չէ հասել) կարող եղած լինի այնքան ընդարձակ տեղոյ վրայ՝ այնպիսի ջորաւոր ազդեցութիւն ունեցած լինել՝ այնչափ ասպարիզք հեռու կեցած ատեն։ մանաւանդ որ Մխիթարեան Միաբանութեան ունեցած վերաբերութիւնն աւելի մերձաւորապէս և կամ գրեթէ բացարձակապէս կաթօղիկ հայութեան հետ եղած է, որք հայութեան ամբողջութեան փոքրամասնութիւն մի կը կազմեն և ոչ աւելի։ Երկրորդ, անքնակալն է որ Մխիթարեան Միաբանութիւնն հարիւր յիսուն կամ երկու հարիւր տարուան ընթացքին մէջ կարող եղած լինի աղաւաղել իւր բնիկ աղգային հնչումն, մինչդեռ ամէն տարի իւր անդամոց տնումը կ'ընդունի ուղղակի Հայաստանի յատուկ գաւառացի բնակիչներէն, և իւր

գրեթէ ամէն անձինք ուղղակի վերաբերութիւն ունեցած և կամ ապրած են տարիներով հայութեան ամբողջութեան մէջ, զայն ճանաչելով իրենց հայրենիք, անդ ունեւելով իրենց արեւակի մերձաւոր և հեռաւոր ամենայն ազգականութիւն։ — Այս հնչման յեղափոխութիւնն կամ աղաւաղումն կարելի էր արդեօք տեղի ունենալ Մխիթարեան Միաբանութեան մէջ, երբ այս վերջինս՝ առանց կենսական կապերով զոգեալ լինելու ընդհանուր հայութեան հետ՝ ապրէր բոլորովին կղզիացեալ, իբրև զլեհահայ և զհնդկահայ եղբարս։

Տաճկահայոց հնչման տարբերութեան իբրև նախնական պատճառ 'ի մէջ կը բերէ Մեծ. Արծրունի՝ մինչդուռ լուրջական լեզուի ունեցած ազդեցութիւնն հայկական լեզուաց, որով և հնչման վրայ։ — Չենք ուզեր բացարձակապէս ժխտել թէ տաճկական լեզուի հնչումն դարերէ 'ի վեր տեղի ունեւելով 'ի Հայս՝ իրեն ազդեցութեան պայտօնք վարած չլինի մասամբ իւրից հայկական հնչման այլալոյսութեան նկատմամբ։ բայց այս ազդեցութիւնս՝ ուրիշ արդիւնք չէր կարող յառաջ բերել բայց եթէ այս ինչ կամ այն ինչ տառի աւելի կամ նուազ փոփոխութիւն կամ խոշորութիւն տալով, և կամ լեզուին յստակ հայկաբանութիւնը աղաւաղելով (ինչպէս արդեամբք եղած կը տեսնենք), այլ ոչ թէ օրինաւոր յորոշութիւն մը կազմել հնչման, և այն՝ դէմ ընդդէմ հակառակ նախընթացաբար 'ի կիր տունուած կենդանի հնչման։ — Չենք կրնար հասկընալ թէ ինչ նկատմամբ այս հայ տառից հնչմանց զանազանութիւնը՝ Մեծ. Արծրունի կը կապակցէ մոնգոլաթիւրք լիզուի ազդեցութեան հետ։ այս իւր գաղափարն պարտաւորեալ էր Մշակի Մեծ. Խմբագիրն իւր հաւաստիչ պատճառներով զօրացընել. բայց որովհետև մենք որ և իցէ լեզուաբանական կամ տրամաբանական ապացոյց չենք տեսներ 'ի մէջ բերուած, հետեաբար զոհ կը լինինք միայն մեր հակառակ կարծիքը յայտնելու։

Խնդիրը պարզագոյն ձևի մէջ ներկայացընելու համար՝ պէտք է նախնկատենք աստ հայկական տառից բաժանումը՝ ըստ նախնի աւանդութեան, և ըստ այնմ հետեանք հանենք մեր պատճառաբանութեան: — Խնդիրը բաղա-

ձայն տառից վրայ լինելով՝ զնենք աստ 'ի ցուցակի սոյն տառից տատիճանաւորութիւնն, որ ընդունելի է թէ Տաճկահայոց և թէ Ռուսահայոց, իրեն հիմն ունեւով 'ի նախնեաց աւանդեալ օրէնս:

Հ Ա Յ Վ Ա Յ Ա Ն Բ Ա Ղ Ա Ջ Ա Յ Ա Յ

Լերկ

Միւրիճ

Թաւ

պ — π — p
կ — κ — k կամ c
տ — τ — t
ծ
ա'

բ — β — b
գ — γ — c կամ g
դ — δ — d
շ
ը

փ — φ — ph
ք — χ — ch
թ — θ — th
ց
չ

Արդ, ինչպէս ներկայ ցուցակէս կը տեսնուի, քառ տառերն անուղղակի վերաբերութիւն ունին մեր խնդրոյն մէջ, երկու հայ հասարակութեանց արտասանութեան մէջ ևս զրեաթէ առանց տարբերութեան հնչուելով, մօտ լատինական p, c կամ k, t տառից հընչման, օրինակ իմն pater, casus, tomus բառից մէջ. բայց իրենց զօրութիւնն նաև հայ լեզուի մէջ, ինչպէս 'ի յոյնն և 'ի լատինն, հազագային առաւելութիւն ունի՝ նկատմամբ լերկ տառից, որով պհ = փ, կհ = ք, տհ = թ, ծհ = ց, ճհ = չ:

Արդ թողլով 'ի բաց քառ տառերն, կը տեսնենք որ մնացեալ լերկ և միջին տառից հնչումն՝ իրարու տեղ փոխանակուած են առհասարակ՝ Ռուսահայոց և Տաճկահայոց արտասանութեան մէջ. որով մի և նոյն բառն՝ օրինակ իմն Պետրոս, մինչդեռ առաջինքն կ'արտասանեն համաձայն յոյն և լատին հընչմանց Πέτρος — Petros, վերջիններն կը հնչեն Βέδρος — Bedros. այսպէս կաթողիկոս՝ մինչդեռ ըստ Ռուսահայոց կը հնչուի καθολικός — katholikos — ca-

tholicos, ըստ Տաճկահայոց ընդհակառակն՝ γαθολιγός — catholicos — gatholigos հնչումն կ'ունենայ. համառօտ ըսենք հոչակաւոր բանասիրի մը հետ՝ թէ Ռուսահայոց կողմէն մեր գորտն է, և մեր գորտն՝ իրենց կողմէն է: — Արդ, առանց ուզելու դեռ ընտրելագոյն հնչումը սահմանել, կը հարցընենք առ Մեծ. Արծրունի՝ թէ կարելի է և կամ տեսնուած է երբեք լեզուական փոփոխմանց պատմութեան մէջ այսպիսի կանոնաւոր աղաւաղումն՝ սոզի մը մեծամասնութեան մէջ: — Մենք չենք յիշեր և չենք ալ գտած յայլոց աւանդեալ այսպիսի զարմանալի երևոյթ մը, ուստի և չենք կարող հաւատալ թէ աղաւաղման արդիւնք լինի այս արտասանութեան տարբերութիւնն: — Ըստ մեր կարծեաց՝ այս երկու արտասանութեանց զանազանութիւնն յառաջ պէտք է եկած լինի երկու ամենահին գաղթականութիւններէ՝ որք տեղի ունեցել են 'ի Հայաստան, և կամ (եթէ ներուի ասել) Ռուսահայոց հնչումն, որով կը վարէր 'ի վերոյ ենթադրեալ գաղթականութեանց մին,

1 Ասիթ ունեցած լինելով խօսելու այս խնդրոյ մասին ազգային գիտնական Էմին վարժապետի հետ՝ նա յայտնած է իւր կարծիքն՝ որով կ'ենթադրէ այս զանազանութիւնն մտած լինի Հայութեան մէջ Ալիլիկեցոց ժամանակ. և այս իւր կարծիքը պարզած է ուսուրէն

լեզուով 'ի լոյս ընծայուած հառի մը մէջ. բայց թէ՛ հառն և թէ՛ ուսուրէն լեզուն ինձ անծանօթ լինելով, չեմ կարողացած ձեռք բերել ցարդ մեծապատիւ գիտնականին այս հետաքրքրալարծ երկասիրութիւնն:

Հին աստին յատուկ էր նաեւ արքունի տան և մեր սակեղարաւ և սոցա հետեւորդ մատենագրաց, որք հին գրաբառ լեզուին կանոններն աւանդեցին մեզ իւրնց ինքնագիր և թարգմանածոյ երկասիրութեանց մէջ. բայց այսու հանդերձ կարող չեղան՝ ոչ մեր այբուբենն յոյն լեզուին համաձայն շարելով և ոչ նոցա յատուկ անունները ըստ այնմ՝ի հայ յեղով՝ մեծամասնութիւն կազմող միւս դաղթականութեան հնչումը յարմարցընել իրենց հնչման. որով ռամիկն, ճիշդ, այժմեան մեր սովորութեան համեմատ, նաև յընթերցման անդ տեղային մատենագրաց յառաջ վարեց իւր սեփական հնչումը, Պետրոս անունն արտասանելով Bedros և ոչ Petros, ինչպէս անշուշտ կ'արտաբերէին զայն Սահակ և Մեսրոպ և այլ մատենագիրք մեր՝ ըստ մեր հաւանական ենթադրութեան, Ենթադրութիւն կ'անուանենք այս մեր կարծիքն և ոչ ըստուգեալ կամ հաւաստելի իրողութիւն. ուստի և իբր ենթադրութիւն՝ կրնայ իւրաքանչիւր դը առաւել կամ նուազ արժէք ընծայել առ այն. մենք չենք ուզեր հակառակել և պնդել՝ կարճեաց ասպարիզին մէջ:

Ռեստի իբրև հեռանք մեր մինչև ցատտ 'ի մէջ բերածնուս' կ'ըսենք՝ որ այս մեր յետին ենթապրովածեան վրայ յեցած՝ 'ի բուն և 'ի հին նախնեաց անտի յառաջ եկած կը համարիմք հաւասարապէս թէ՛ Ռուսահայոց և թէ՛ Ցաճկահայոց արտասանութեան եղանակն, որով և երկուքն ուլ յատուկ հայեական հնչումն. բայց զուռալինն (Ռուսահայոցն) ընտրելագոյն կը համարիմք այս նկատմամբ, որ նա համաձայն է ոչ

միայն մեր Հին գրաւոր լեզուին տառա-
գրական կանոնաց¹, այլ և բառ լեզուա-
քննական բաղդատութեան² համա-
ձայն է ընդհանուր հընդերօպական
քայքայթիւ լեզուաց տառից հնչման. և
հետեաբար կ'ըսենք՝ որ Ռուսահայոց
հնչումն ընտրելադոյն է քան զՏաճկա-
հայոցն, քայց վերջնոցս հնչումը յատուկ
հայկական արտասանութենէն օտար
համարել՝ է անտեղծութիւն. — Այս մեր
համարձակ կարծիքը լսելէն վերջը՝
կ'առաջարկեմք Պր. Առաքել Սարուխա-
նեանցի՝ (Տես 'ի Մշակ լրագրի. 1886,
թիւ 104) որ աչքէ անցնէ Հ. Արսէն
Բագրատունւոյն Զարգացելոց քերաւ,
կանոնքեան մէջ հայկական տառից
հնչման և տառադարձութեան մասին
աւանդուած կանոնները, Հ. Գաբրիէլ
Այվազեանի՝ Ղ և Լ տառից հնչման
ճառին մէջ Ռուսահայոց և Տաճկահայոց
արտասանութեան նկատմամբ գրածը,
Բազմաւիշէյ Հանդիսարանի մէջ ոչ
սակաւ անգամ ունայիսի խնդրոց
վրայօք գրուած յօդուածներն, (օրինակ
իմն 1846, էջ 54. 1845, էջ 366. 1877,
էջ 97. 1883, էջ 236 ... և այլն), և այս-
պէս քաջ տեղեկանայ վննետկոյ Միխ-
իլարեանց ուսումնական կարծեացը
վրայ՝ հայկական տառից արտասանու-
թեան մասին, որով նորա արդէն կէս
դարէ 'ի վեր ընդունած և քարոզած են
'ի տեսականին՝ զոր ինչ այլք այժմ իբ-
րև նոր իմն տեսութիւն 'ի մէջ բերել
կը կարծեն. իսկ 'ի գործնականայն ալ՝
է խնդիրն. և մենք յաճորդ տողերսն
մէջ քանանք պարզել նաև զայն :

Լսենք Երկրորդ. անգամ մ'ալ Մյա-
կի Մեծ. Խմբագրին առ մեզ ուղղեալ
գանդատն, այսինքն է՝ և վերջոնում էք

1 ինչպէս 'ի վերայ անկողեցեցինը' մեր թաւ
գրերն փ, ք, ք, (ց, չ), երկու կողմանց ալ
ընդունինք են մերձաւոր արտասանութեամբ
լատինական ք, c=к, տ տալից. արդ եկէ՛ղ դի-
տեմը՝ ինչպէս 'ի լատինն և 'ի յոյնն' միջին
բաղամասինց հետ զուգաւորելով հաշտե՛մը՝
կը կազմուին փ, ք, Յ կամ ph, ch, th, այս-
պէս նաև 'ի հայ լեզուի' պ, կ, տ, (ծ, ճ) պիտի
համարուին կամապատը յունական միջին բա-
ղամասինց, այսինքն մերձաւոր հնչմամբ յոյն

π, ς, τ ե կամ լատին b, g, d տառից, որով և
 իբր միջինը ընդ π և ընդ ς, ընդ ς և ընդ
 ς, ընդ η և ընդ π, ընդ d և ընդ g, ընդ g և
 ընդ ς, առեթիվ բերվող մեքանաբան պիտի հնչուին
 քան առաջնոց. գիտողութիւն մը՝ որ հա-
 մաձան իջն է ըստ ամենայնի Ռուսահայոց հնչման
 և ՚ի հակադասութեան կը ձգէ ինքն իրեն մէջ
 Տաճկահայոց հնչումը, թէպէտ և զվերջինս
 իւրաքարայրներն չարմանալու աւանդութիւնը՝
 ինչպէս զիյն յետոյ պիտի անանենք։

վենեցիայում հրատարակված մի դիրք
 և կամ լրագիր, և սկզբից մինչև վերջ
 մի գլուխ տառագրական կոպիտ սխալ-
 ների էք հանդիպում, Բեդերման, վե-
 նետիկ, Բարիզ, Կալուկիդիա, Կարի-
 պալտի, Տրիշ, Պեռլին, Լամարդին,
 և այլն: Եթէ նաև հնչումն նկատմամբ
 են այս սխալ համարումներն, մինչև
 ցայժմ յառաջ բերածնէս կը հետևի
 որ նաև Տաճկահայն և կամ վենետիկոյ
 Մխիթարեանն մի և նոյն իրաւամբք
 պիտի կարենայ ըսել Ռուսահայոց նը-
 կատմամբ, թէ «վերջընում էք Տփղի-
 սում հրատարակուած մի դիրք և կամ
 լրագիր, և սկիզբից մինչև վերջ մի գլ-
 լուխ տառագրական կոպիտ սխալների
 էք հանդիպում, Պետրքում, վենե-
 դիզ, Պարիզ, Գամբելտաւ, Գարի-
 քալիլի, Դրիլ, Բեռլին, Լամարդին,
 և այլն »: Իսկ եթէ լոկ գրութեան մա-
 սին կը վերաբերին այս սխալ անու-
 նածներն, այն ալ ունի իրեն արդարա-
 ցուցիչ պատճառն, որ է անհրաժեշտ
 տրամաբանական արդիւնք մը Տաճ-
 կահայոց հնչման:—Եթէ գարեւէ 'ի
 վեր (ըստ մեր վերոյիշեալ ենթադրու-
 թեան՝ նոյն իսկ 'ի Նախնեաց անտի)
 հայ ժողովրդեան մեծամասնութիւնն
 (Հայաստանեայք) օտար կերպով հըն-
 չելով փոքրամասնութեան (Պարսկա-
 վրա-Հայք) գրած տառերը՝ սխալ ար-
 տասանութեան իրենց լսելիքը վարժե-
 ցուցեր են, և 'ի սէր և 'ի մեծարանս
 Նախնեաց (Թարգմանչաց) այն սխալ
 հնչման համեմատ անսխալիս պահած
 են նաև գրութեան եղանակն մինչև
 ցայսօր, ոչ ճշ կարող է բռնադատել դի-
 րենք՝ որ այսօր այս իրենց սխալմունքը
 գէթ մասամբ իւրիք չուղղեն: Այսինքն
 թէ իրենց հնչման համաձայն չգրոյմեն
 այն ամենայն անուն, որը հնութեան
 սրբազան դրոյմը կրելէ զուրկ են, որք
 Նախնեաց գրչին ներքև երբեք չեն
 հանդիպած և կամ սակաւ ուրեք հան-
 դիպեր են, և կամ ստէպ իսկ հանդիպեր
 են, բայց ժամանակին հարկը զանոնք
 ալ ուղղել կը հրամայէ:— Խօսքերնիս
 ընդհանուր նոր անուանց տառադար-

ձութեան վրայ չէ, (որոյ նկատմամբ
 կրնայ ընթերցողն գիմել հմտայից յօ-
 դուածի մը 'ի Բագմ. 1846, էջ 51), այլ
 յատկապէս ք, գ, դ և պ, կ, տ գրե-
 լուն տառագործութեան վրայ:— Եւ
 յիրաւի, Բնչ յանցանք ունի Տաճկա-
 հայն՝ երբ յունական Πέτρος կամ լա-
 տինական Petrus անունն π և ρ տա-
 ռից և կամ τ և t տառից հնչումը 'ի
 նախնեաց անտի ուտել է միշտ ք և կամ
 դ տառերով արտասանել, ուստի և Pe-
 termann անունն արտասանութիւնը
 լսած ժամանակ՝ նոյնը հայերէն համա-
 հնչիւն տառերով դրոյմած է Բեդեր-
 ման, այսպէս նաև վենետիկ, Բարիզ,
 Կալուկիդիա, և այլն:— Բայց Թարգմա-
 նիչք հինգերորդ դարուն մէջ այդպէս
 չեն գրած Πέτρος անունը, այլ Պետրոս,
 պիտի առարկէ Մշակի Մեծ. Խմբագրի-
 լուն. և ինչ իրաւամբք Նախնեաց այս
 գրութիւնը կ'օղջանգակեն այսօր Տաճ-
 կահայք:— Այն իրաւամբք՝ կրնայ պա-
 տասխանել (ըստ մեր վերոյիշեալ են-
 թադրութեան) Տաճկահայն, որով հին
 ատեն Նախնեաց (Հայաստանի ժողո-
 վրդեան) մեծամասնութիւնն՝ չեն ըն-
 դունած Թարգմանչաց մեր տառից հա-
 մար որոշած աստիճանաւորութիւնն,
 և իրենք իրենց յատուկ հնչումը պա-
 հելով յընթերցման անդ՝ աւանդել են
 մեզ պ միշտ ք հնչել և ոչ ρ, տ միշտ ժ
 հնչել և ոչ t, որով մեք իրենց (Թարգ-
 մանչաց) Պետրոս—Petros գրութիւնն՝
 արտասաններ ենք մեր յատուկ հնչմամբ
 Bedros և ոչ Petros, և այլն, որով մեք
 իրենց յատուկ հայկական բառերն,
 զոր օրինակ մարդ—mard, արտասաններ
 ենք միշտ mart, և ընդ հակառակն
 մարտ—mart՝ արտասաններ ենք միշտ
 mard, այսպէս և միւս ամէն հայ և հայ
 տառիւք գրուած օտարազգի բառեր:
 Վասն զի Թարգմանիչք սերունդք լինե-
 լով մի կամ երկու դաւառաց Հայա-
 ստանի, չէին կարող հեղինակ կամ հնա-
 րողք լինել հայկական տառից հնչման,
 ինչպէս հեղինակ և հնարողք եղան տ-
 նոնց գրութեան կերպին. հնչման հե-
 ղինակն ժողովուրդն է. արդ ժողովուր-

դեան մեծամասնութիւնն տարբեր կը հնչէր քան զթարգմանչաց գաւառս, ուստի նաև տարբեր գրութեան ոճ մը գործածելու իրաւունք ունէր. զի Մեսրոպ ոչ թէ գրերն հնարեց, այլ անոնց գորութիւնը սահմանեց, համարատելով զայնս ընդ յունական արվարետաց:

Անշուշտ մեր վերոյիշեալ եկեղեցական թեան վրայ յեցեալ՝ այս պատասխանըս տուած ժամանակ՝ ոչ միայն Ռուսահայք, այլ և բազումք 'ի Տաճկահայոց, նորալուր և ինքնահնար իրաց կամ ցնորական ենթադրութեան ըստեղծիչ պիտի ամբաստանեն զմեզ. բայց մենք, կարծեմ, եթէ ոչ նորալոց՝ այլ գէթ ցնորից սահմանէն կատարելապէս արտաքոյ պիտի ցուցնենք ըզմեզ՝ եթէ մէջ բերելու ինիքն աստ հետեալ հեղինակութիւններն, որք իրենց հնութեամբ և գիտութեամբ՝ երկու հակառակ կողմանց ալ յարգելի պէտք է լինին. — Դիոնեսիոսի թրակագրոյ քերականութեան թարգմանիչն (ըստ ոմանց Մովսէս Խորենացի, ըստ այլոց Դաւիթ Անյաղթ կամ Ստեփանոս Սիւնեցի), որ ընդհանրապէս յունարենի կանոնները կ'ուզէ յարմարցնել նաև մեր լեզուին, տառից դասաւորութիւնն աւանդած առեն՝ կը ստիպուի զարտուղութիւն մ'ընել իւր բռնած ոճոյն. ըսելով «Են սղքա (բաղաձայն տառք)՝ նուրբք տասն, և ստուարք ինն, և միջակք եւթն. և միջակք վասն այսորիկ անուանուեցան՝ զի քան ըզյոյրսն նուրբք են, և քան գնուրբքն յոյրք » և քիչ վերջը թուելով այս միջակ անուանեալ տառերն՝ կը յաւելու. «Եւ են միջակքն՝ բենն 'ի մէջ մենի, պէի և փիւրի. վասն զի քան զմեն և զպէ խաժ է, և քան զփիւրն բարակ. և զի մըն 'ի մէջ կենի, քէի և խէի. զի քան զկենն թաւ է, և քան զխէ և զքէ լերկ. և զա 'ի մէջ տիւնի և թոյի. զի քան զտիւն թաւ է և քան զթոյ լերկ », և այլն: Իսկ եթէ դժուարինք վերոյիշեալ խաժ բառն ըմբռնելու՝ զիմենք երգընկացոյն՝ որ մանրամասն և պարզօրէն կը մեկնէ զայն, ըսելով « Բեն սակաւ

ստուարագոյն է, զոր խաժ ասէ թարգմանիչն (քերականութեան Դիոնեսիոսի) քան զմեն և զպէ, իսկ քան զփիւր բարակ. քակելի մեն և պէ ասելով՝ հանդիսարկի իջանեն շրթունքն, և քոյլ և կակոռդ հանեն բարբառ. իսկ քեն թախտնուն հանէ 'ի շրթանցն ուժգին և ստուարագոյն, Բայց փիւր՝ առաւել քան զբեն, որչափ նա առաւել քան զմեն և զպէ. վասն զի յանուանելն՝ յերեսարս բախէ զշրթունս » — Այս և ասոնց նման նախնի քերականութեանց աւանդութիւններէն յայտնի կը տեսնենք՝ որ որչափ մեր տառից դասաւորութիւնն ըստ յունական արքայականաց՝ կը զօրէ արդարացընելու Ռուսահայոց այժմեան արտասանութիւնը, նոյնչափ ևս մեր քերականք, որոց ջանքն եղած է ուղիղ առողջանութեան կանոններն՝ զբաւոր աւանդել յետոնց, կը համաձայնին արդարացընելու Տաճկահայոց արտասանութիւնն: — Արդ ոչ ուրեմն յայտնապէս նաև մեր նախնեաց ժամանակէն 'ի վեր բուրովին գէմընդդէմ վարդապետութեան և հնչման կը հանդիպինք: Եթէ այս վերոյիշեալ վարդապետութիւններըս գրող անձինք՝ երգնկային և կամ Դաւիթ Անյաղթ (կամ զո՞վ ալ համարինք թրակացոյն թարգմանիչ) իրենց ժամանակին դրեցին և աւանդեցին հակառակ մեր այբուբենից դասակարգութեան, և ոչ ոք իրենց ընդդէմ ելաւ և կամ զիրենք յատուկ ազգային հինչման աշխատանքով բամբասեց, միթէ այժմ նոյն վարդապետութիւնը 'ի գործնախան վարող Տաճկահայք կամ Մխիթարեան Մխարանութիւնն դատապարտելի պիտի համարուի, և որոյ հեղինակութեամբ:

Եթէ չենք կորուսած լաւ տրամաբանելու արուեստն՝ պիտի հետեցնենք մանաւանդ՝ որ մանրամասն և որոշակի աշխուղեալ վարդապետութիւն մը աւելի զգրութիւն ունի և համոզելու իրաւունք՝ քան թէ դէմ առ դէմ շատաւ յոռնակաւ և հայկական աշտարակից տառերն, և կամ անոնց տա-

առաջարձութիւնն 'ի յատուկ կամ 'ի հասարակ անուանս. որք ունին նաև իրենց բազմութիւն զարտուղութիւնն. որն 'ի նպատտ Տաճկահայոց հնչման. Բայց չենք ուզեր երկարել խօսքերն իս ուր իրն ինքնին, այսինքն Նախնեաց վերջիշեալ գրաւոր աննշուրթիւնքն, շատ պայծառ և բացայայտ կը խօսին. ուստի գոհ կը լինինք մենք պարզ դիտողութեամբ մը վերջ տալու ներկայ յօդուածիս: — Մեր ընելիք դիտողութիւնն կը կայանայ երկու հարցմանց վրայ, որոց պատասխանն ուրիշ առթի կը թողունք. այսինքն է՝ նախ ի՞նչ կը նշանակէ արդեօք մեր Թարգմանչաց կամ յատկապէս Ս. Մեսրոպայ ամենամեծ դժուարութիւնն՝ զոր կը զգայր դանիելեան նշանագրերը Հայոց արտասանել տալու մասին, մինչ նաև յետ դիւտի գրոյն անգամ՝ հարկ լինի արքունի ձեռնի ձեռնարկութեամբ ընտրել փափկածայն և ուշիւ մակնիշնս սուկառս 'ի հայկական վարժարանաց, զանոնք 'ի Բիւզանդիոն կամ յԱթէնս ուղարկելու համար. — և երկրորդ, եթէ

ըստկարծեաց Մեծ. Արժունւոյն՝ Տաճկահայոց արտասանութիւնն այսքան ամենամեծ յեղափոխութիւն կարացեր է կրել յազգեցութենէ մանգոյթութիւնը լեզուի, միթէ Բուսահայոց հնչման վրայ բնաւ ազգեցութիւն չէ գործած վրայ կամ Պարսից լեզուին հնչումն: — Այս երկու հարցերս պիտի առաջնորդեն մեզ անշուշտ հին ատեն Պարսկա-Վրա-Հայոց և Հայաստանի միւս գաւառաց հնչման կամ արտասանութեան յատուկ վարժարաններ գլուխ, և փոքր ինչ հայկական տառից հնչման խնդիրը պարզելու: — Առ այժմ մենք մեր վերջ մէջ բերած կարծիքը պարզած կը համարինք, այսինքն է, Բուսահայոց հնչումն ընտրելագոյն է քան զՏաճկահայոցն՝ ըստ արտահայտման է հայերէն տառից շարակարգին, բաղադրութեամբ յոյն ալփաբետաց և հնչման տառից հնչեւորպեան քոյրակի լեզուաց. քաջ Տաճկահայոց հնչումն օտար հաւանքել 'ի հայկական սեփական արտասանութենէ՝ է անտեղի:

Հ. ՍԹԵՆԱՍ ՏՐԵՈՅԵԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱՅ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Գ. — Սեպտեմբեր 27ին կը ծանուցանէր հեռագիրն՝ Արևելագիտաց եօթներորդ ժողովոյն բացումը, որոց նպատակն է քննել 'ի լոյս ածել և ստուգել արևելեան հին ազգաց, աշխարհաց, գրականութեան, գեղարուեստից թաղուն և անստոյգ ծանօթութիւնները, ըստ զանազան գլխոց հնախոյզ գիտութեան: Սոյն ժողովոյն առաջարկուեցաւ 'ի Վանացս՝ հետեւեալ պատմական և հնագիտական տեղեկութեանց համեմատ՝ 'ի խնդիր ելանել հնութեանց հայկական երկը հին և անյայտացեալ մեծամեծ քաղաքաց, որք Արտաշատ, Նախաճառն և Արմաւիր: — Բանասիրաց փափաքը լեզունքու արտաբանութեան կը դնենք սատ ըովանդակապէս ժողովոյն ներկայացուած այս հետաքրքրական և հմտալից տեղեկագիրն: